ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԶՈՀՎԱԾ, ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԿԱՄ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22.01.2021 15:30

2021թ. հունվարի 21-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել մասնագիտական քննարկում Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տուժած անձանց մոտ առաջացած իրավական խնդիրների, լուծման հնարավոր ուղիների, դրանցում փաստաբանների և իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց աջակցության հնարավորությունների վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, նախագահի տեղակալներ Մանե Կարապետյանը և Հարութ Ակլունցը, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը, ՀՊԳ ղեկավարի տեղակալներ Լուսինե Սարգսյանը և Արմինե Ֆանյանը, ինչպես նաև փաստաբաններ Արա Ղազարյանը, Սիրանուշ Սահակյանը, Արա Խզմալյանը և Լևոն Գևորգյանը:

Քննարկման արդյունքում ընդգծվել է մարտական գործողությունների մասնակիցների և պատերազմի արդյունքում տուժած անձանց՝ հետպատերազմյան շրջանում առողջական, սոցիալական, իրավական և այլ բնույթի խնդիրների արագ և հասցեական լուծման խիստ կարևորությունը:

Այդ առումով հատուկ անդրադարձ է կատարվել զոհված, անհայտ կորած կամ գերեվարված զինծառայողների ընտանիքների անդամների, վիրավորում ստացած զինծառայողների, մարտական գործողությունների մասնակիցների, մահացած կամ հաշմանդամություն ստացած քաղաքացիական անձանց և նրանց ընտանիքի անդամների, տեղահանված կամ գույքային վնաս կրած անձանց խնդիրներին:

Առանձնացված խնդիրների առնչությամբ քննարկվել է առկա վիճակը, և նախանշվել են հնարավոր լուծումները: Որպես առաջնային գործողություն՝ արձանագրվել է ըստ առանձին խմբերի ենթադրյալ հարցերի վերաբերյալ նշված անձանց համար ուղեցույց կազմելու և հրապարակելու անհրաժեշտությունը:

Առաջարկվող նորություններ

30.09.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒՆԵՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

08.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ

09.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

23.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՈՐՈՇԵԼ Է CHEVROLET NIVA 212300-55 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })